

Luys Lnyu®



ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ՆՈՅԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻՆ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ.....	1
1.1. Արդյունաբերություն.....	2
1.2. Շինարարություն.....	4
1.3. Ծառայություններ.....	4
1.4. Առևտուր.....	6
2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ.....	6
3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ.....	9
4. ՓՈԽԱՐԺԵՔ.....	10
5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ.....	11
5.1. Բյուջեի եկամուտներ.....	11
5.2. Բյուջեի ծախսեր.....	13
5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը.....	14
5.4. Պետական պարտք.....	14
6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ.....	15
6.1. Գնաճ.....	15
6.2. Ավանդներ և վարկեր.....	16
7. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.....	19
8. ԱՄՓՈՓՈՒՄ.....	20

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

Բազում բացասական իրադարձություններով հագեցած 2020 թվականը մոտենում է ավարտին, սակայն տնտեսական անկումը շարունակում է խորանալ՝ նվազեցնելով տնտեսության ներուժային հնարավորությունները և հետաձգելով տնտեսական վերականգնման սկիզբը:

Արցախյան պատերազմի, կորոնավիրուսի համավարակի երկրորդ ալիքի ազդեցությունների, ինչպես նաև քաղաքական անկայունության պայմաններում, նոյեմբեր ամսին տնտեսական ակտիվության անկումը շարունակել է խորանալ: Նախորդ տարվա նոյեմբերի նկատմամբ տասներկուամսյա անկումը կազմել է 10.3%՝ հոկտեմբերի նկատմամբ խորանալով 1.6 տոկոսային կետով, իսկ կուտակային անկումը՝ հունվար-նոյեմբեր ամիսների տնտեսական ակտիվության անկումը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ, կազմել է 7.2%՝ խորանալով 0.4 տոկոսային կետով:

Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային, %




Նշենք, որ հոկտեմբեր ամսվա ՏԱՑ-ի ցուցանիշները վերանայվել են, ինչի արդյունքում այդ ամսվա տնտեսական ակտիվության անկումը կազմել է 8.7%՝ նախկինում հրապարակված 8.1-ի փոխարեն, իսկ հունվար-հոկտեմբեր ամիսների անկումը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կազմել է 6.8%՝ խորանալով 0.1 տոկոսային կետով:

Տնտեսական ակտիվության ցուցանիշի անկումը շարունակում է պայմանավորված լինել առևտրի, ծառայությունների և շինարարության ոլորտների անկումներով, որոնց նպաստումները հունվար-նոյեմբերի ՏԱՑ-ին կազմել են համապատասխանաբար -5.0, -3.2 և -0.6 տոկոսային կետ:


Տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ գյուղատնտեսության ոլորտը շարունակում է ունենալ աճ և դրական նպաստել ընդհանուր տնտեսական ակտիվությանը: Սակայն, այս ոլորտի ցուցանիշները հրապարակվում են եռամսյակային կտրվածքով, հետևաբար հստակ գնահատել նպաստման չափը հնարավոր չէ:

Գծապատկեր 2. Տնտեսական ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները, 2020թ., տոկոսային կետ



1.1. Արդյունաբերություն

Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը, %



Արդյունաբերության անկման տեմպը շարունակել է արագանալ նոյեմբեր ամսին: Սեպտեմբերին արդյունաբերության ոլորտում տնտեսական ակտիվության 12-ամսյա ցուցանիշը գրանցել էր դրական աճ՝ առաջին անգամ փետրվարից հետո,

որը սակայն, փոխարինվել է կտրուկ անկմամբ հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին: Նոյեմբերին արդյունաբերության անկման տեմպը՝ նախորդ տարվա նոյեմբերի նկատմամբ կազմել է 6.1%, իսկ կուտակային անկումը՝ 0.2%: Հարկ է նշել, որ չնայած տարվա ընթացքում բացասական երևույթներին, արդյունաբերությունը միակ ճյուղն էր, որտեղ պահպանվում էր դրական աճը: Սակայն, նոյեմբերին այն նույնպես դարձել է անկում ապրող ճյուղ:


Արդյունաբերության անկումը հիմնականում պայմանավորված է մշակող արդյունաբերության անկմամբ, իսկ հանքարդյունաբերությունը շարունակել է աճել՝ հակազդելով ընդհանուր արդյունաբերության անկմանը: Այսպես՝ հունվար-հոկտեմբեր ամիսներին¹ մշակող արդյունաբերության ենթաճյուղի տնտեսական ակտիվությունը կրճատվել է 2.9%-ով, իսկ հանքարդյունաբերության ոլորտում շարունակել է գրանցվել աճ, որը կազմել է 14.9%: Վերջիններիս նպաստումներն ընդհանուր արդյունաբերության աճին կազմել են համապատասխանաբար -1.9 և 2.6 տոկոսային կետ: Հարկ է նշել, որ հանքարդյունաբերության աճի տեմպը 1.8 տոկոսային կետով նվազել է նախորդ ամսվա համեմատ, ինչը և եղել է արդյունաբերության անկման խորացման հիմնական պատճառը: Արցախյան պատերազմի հետևանքով ստեղծված իրավիճակը ավելի մեծ բացասական ազդեցություն կունենա հանքարդյունաբերության վրա՝ կապված Սոթքի հանքավայրի անորոշ ճակատագրով, ինչպես նաև Արցախի Հանրապետության օկուպացված տարածքներում մնացած հանքավայրերի շահագործման անորոշությամբ:

«Էլեկտրաէներգիա, գազի և գոլորշու մատակարարում» ենթաճյուղում գրանցվել է 0.4% աճ՝ ընդհանուր արդյունաբերության աճին ունենալով 0.05 տոկոսային կետ դրական նպաստում, իսկ «ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում» ենթաճյուղը նվազել է 15.3%-ով՝ ունենալով 0.2 տոկոսային կետ բացասական նպաստում:

¹ Հունվար-նոյեմբեր ամիսների ցուցանիշները դեռևս չեն հրապարակվել:

1.2. Շինարարություն


Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, %



Շինարարության ոլորտում վերջին երեք ամիսներին նկատվում է փոքր աճ, որի արդյունքում մեղմվել է կուտակային անկման տեմպը: Նույնաբեր ամսին շինարարության ծավալը նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ գրանցել է փոքր՝ 2.0% աճ, որի արդյունքում հունվար-նոյեմբեր ամիսների անկման տեմպը հունվար-հոկտեմբեր ամիսների համապատասխան ցուցանիշի համեմատ բարելավվել է 2.1 տոկոսային կետով՝ կազմելով 11.2%:

1.3. Ծառայություններ

Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, %



Ծառայությունների կուտակային անկման տեմպը նույնպես խորացել է՝ հասնելով բավական բարձր՝ 13.6%-ի: Ինչպես Արցախյան պատերազմը, այնպես

էլ կորոնավիրուսի երկրորդ ալիքը զգալի ազդեցություն են ունենում ծառայությունների ոլորտի վրա, քանի որ ստեղծված բարոյահոգեբանական մթնոլորտում մարդիկ ավելի քիչ են օգտվում ծառայություններից: Վերջինս նոյեմբերին՝ նախորդ տարվա նոյեմբերի նկատմամբ նվազել է 18.6%-ով, իսկ հունվար-նոյեմբեր ամիսների կուտակային անկումը կազմել է 13.6%՝ նախորդ ամսվա համապատասխան ցուցանիշի համեմատ նվազելով 0.5 տոկոսային կետով:


Հունվար-հոկտեմբեր ամիսների տվյալներով², ծառայությունների անկումը հիմնականում պայմանավորված է եղել «կացության և հանրային սննդի կազմակերպում», «տրանսպորտ» և «մշակույթ, զվարճություններ և հանգիստ» ենթաճյուղերի անկմամբ, որոնց բացասական նպաստումները կազմել են համապատասխանաբար 4.6, 4.0 և 2.8 տոկոսային կետ: Ծառայությունների ոլորտում դրական դինամիկա են շարունակում դրսևորել միայն «ֆինանսական և ապահովագրական գործունեություն» և «տեղեկատվություն և կապ» ենթաճյուղերը, որոնց դասվող ծառայությունների ծավալները նույն ժամանակահատվածում աճել են համապատասխանաբար 8.0% և 7.2%՝ ընդհանուր ոլորտի աճին նպաստելով համապատասխանաբար 1.7 և 0.9 տոկոսային կետով:

Նշենք, որ հոկտեմբեր ամսվա ծառայությունների ոլորտի ցուցանիշները վերանայվել են, ինչի արդյունքում այդ ամսվա անկումը 21.0%-ից դարձել է 23.3%, իսկ հունվար-հոկտեմբեր ամիսների անկումը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կազմել է 13.1%՝ խորանալով 0.3 տոկոսային կետով:

² Հունվար-նոյեմբեր ամիսների ցուցանիշները դեռևս չեն հրապարակվել:

1.4. Առևտուր


Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, %



Առևտրի ծավալների 12-ամսյա անկման ցուցանիշը հոկտեմբերին՝ սեպտեմբերի համեմատ գրեթե կրկնապատկվել է, իսկ նոյեմբերին շարունակել է խորանալ: Առևտրի ծավալները նոյեմբերին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ նվազել են 22.0%՝ հոկտեմբերի 20.9% անկման դիմաց, ինչի արդյունքում հունվար-նոյեմբերի անկումը խորացել է՝ կազմելով 13.5%: Այս միտումը նույնպես կապված է Արցախյան պատերազմի հետ, իսկ դրա ավարտից հետո՝ երկրում ստեղծված անորոշություններով և անկայունությամբ:

2. ԱՐՏԱԽԱՆ ԱՌԵՎՏՈՒՐ

Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճը, %



Արտահանումը կտրուկ նվազել է նոյեմբեր ամսին: Վերջին ամիսներին արտահանման տասներկուամսյա անկման տեմպը մեղմվել էր ապրիլի վատթարացումից հետո, սակայն նոյեմբեր ամսին այն նորից կտրուկ վատթարացել

է՝ նախորդ տարվա նույն ամսվա համեմատ նվազելով 19.4%-ով: Արդյունքում, մոտ 1.7 տոկոսային կետով վատթարացել է կուտակային աճը՝ հունվար-նոյեմբեր ամիսներին կազմելով 5.2%:

Նոյեմբեր ամսվա արտահանման կառուցվածքի տվյալները դեռևս չեն հրապարակվել, հետևաբար դրա պատճառները պարզել դեռևս հնարավոր չէ: Սակայն, դա կարող է պայմանավորված լինել հանքարդյունաբերության արտահանման կրճատմամբ, քանի որ այս ոլորտում առաջացել են դժվարություններ՝ կապված Սոթքի, ինչպես նաև Արցախի Հանրապետության տարածքի օկուպացված մասում մնացած հանքերի շահագործման անհնարինությամբ:


Հունվար-հոկտեմբեր ամիսների տվյալներով³ արտահանման նվազումը հիմնականում պայմանավորված է «պատրաստի սննդի արտադրանքի» արտահանման 12.7% կրճատմամբ, «թանկարժեք և կիսաթանկարժեք մետաղների» 13.2% կրճատմամբ և «սարքեր և ապարատների» 52.5% կրճատմամբ, որոնք ընդհանուր արտահանման աճին ունեցել են համապատասխանաբար 3.0, 2.1 և 1.9 տոկոսային կետերով բացասական նպաստում:

Արտահանման աճին հիմնական դրական նպաստում ունեցող ոլորտը շարունակում է մնալ հանքարդյունաբերությունը, որի աճը հունվար-հոկտեմբեր ամիսներին արդեն սկսել է դանդաղել՝ կազմելով է 15.9%՝ նախորդ ամսվա 17.5%-ի դիմաց: Իսկ նպաստումն ընդհանուր արտահանման աճին կազմել է 4.5 տոկոսային կետ՝ նախորդ ամսվա 4.9 տոկոսային կետի դիմաց:

Նշենք, որ ՀՀ ՎԿ-ի կողմից վերանայվել են նախորդ ամիսների արտահանման ցուցանիշները, ինչի արդյունքում մարտից մինչև հոկտեմբեր ընկած բոլոր ամիսների արտահանման կուտակային անկման ցուցանիշները բարելավվել են միջին հաշվով 0.6 տոկոսային կետով:

³ Հունվար-նոյեմբեր ամիսների ցուցանիշները դեռևս չեն հրապարակվել:

Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճը, %



Ներմուծման ծավալների անկումը նույնպես խորացել է նոյեմբերին՝ գերազանցելով ապրիլի անկումը և հասնելով 28.8%-ի: Արդյունքում հունվար-նոյեմբեր ամիսների անկման տեմպը նույնպես խորացել է՝ հասնելով 15.9%:

Հունվար-հոկտեմբեր ամիսների տվյալներով⁴ ներմուծման նվազումը պայմանավորված է գրեթե բոլոր ապրանքախմբերի գծով ներմուծման նվազմամբ: Առավել խոշոր բացասական դերակատարում է ունեցել ավտոմեքենաների ներմուծման 68.1% կրճատումը, ինչը ընդհանուր ներմուծման կրճատմանը նպաստել է 8.2 տոկոսային կետով: Զգալի ազդեցություն են ունեցել նաև «թանկարժեք և կիսաթանկարժեք մետաղներ» (նվազումը՝ 49.8%) և «հանքահումքային արտադրանք» (նվազումը՝ 9.4%) ապրանքախմբերի ներմուծման ծավալների անկումները, որոնց բացասական նպաստումները կազմել են համապատասխանաբար 2.7 և 1.4 տոկոսային կետ:

Ներմուծման ծավալներին դրական նպաստում են ունեցել «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» ապրանքախմբի 4.9% և «ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի 6.2% աճերը, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 0.8 և 0.4 տոկոսային կետ:

ՀՀ ՎԿ-ի կողմից վերանայվել են նաև ներմուծման ցուցանիշները, ինչի արդյունքում մարտից մինչև հուլիս ամիսների կուտակային աճի տեմպերը վատթարացել են միջին հաշվով 1.0 տոկոսային կետով, իսկ օգոստոսից սեպտեմբեր ամիսների կուտակային աճի տեմպերը բարելավվել են միջին հաշվով 0.6 տոկոսային կետով:


⁴ Հունվար-նոյեմբեր ամիսների ցուցանիշները դեռևս չեն հրապարակվել:

3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ

2020թ. հունվար-նոյեմբեր ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ միջին ամսական անվանական աշխատավարձի աճը կազմել է 4.2%, ինչը 1.6 տոկոսային կետով ավելի ցածր է, քան նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը: Ընդ որում՝ պետական հատվածում աշխատավարձն աճել է 5.9 տոկոսով, իսկ մասնավոր հատվածում՝ 3.2 տոկոսով⁵:

Հունվար-հոկտեմբեր ամիսներին միջին ամսական անվանական աշխատավարձը կազմել է 186,167.0 դրամ, ընդ որում՝ պետական հատվածում՝ 165,076.0 դրամ, իսկ մասնավոր հատվածում՝ 196,204.0 դրամ:




Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը, 2020թ., հունվար-նոյեմբեր, %



⁵ Միջին ամսական անվանական աշխատավարձի ցուցանիշի հաշվարկում (ապրիլից սկսած) ներառվել են նաև այն կազմակերպությունների տվյալները, որոնք COVID-19-ի հետևանքով աշխատողների մի մասին կամ ամբողջությամբ ուղարկել են չվճարվող հարկադիր պարապուրդի: Վերջիններիս աշխատանքային գործունեությունը չի դադարեցվել, սակայն չեն վարձատրվել:

4. ՓՈԽԱՐԺԵՔ

**Գծապատկեր 10. Անվանական փոխարժեքի միտումները, կուտակային աճը, %
(աճը նշանակում է ՀՀ դրամի արժևորում)**



2020 թվականի հունվար-նոյեմբերին ՀՀ դրամի միջին փոխարժեքի արժեզրկման տեմպը ԱՄՆ դոլարի նկատմամբ շարունակել է արագանալ: Նախորդ տարվա նույն ամիսների համեմատությամբ հունվար-նոյեմբերին ՀՀ դրամի արժեզրկումն ԱՄՆ դոլարի նկատմամբ կազմել է 1.2%: Եվրոյի նկատմամբ ՀՀ դրամի արժեզրկումը նույնպես խորացել է և կազմել է 2.4%: Նույն

Ժամանակահատվածում ՌԴ ռուբլու նկատմամբ նկատվում է ՀՀ դրամի արժևորման տեմպի արագացում, որը կազմել է 9.4%:


Դրամի փոխարժեքի արժեզրկման ցուցանիշներն առավել ակնհայտ են ժամանակահատվածի վերջի դրությամբ ուսումնասիրելիս: Այսպես, նոյեմբերի վերջի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքը (դոլարի նկատմամբ) կազմել է 506.4 դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի՝ նոյեմբերի վերջի նկատմամբ արժեզրկվելով 5.6%-ով: Եվրոյի նկատմամբ ՀՀ դրամի արժեզրկումը նույն ժամանակահատվածում կազմել է 13.3%:

5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ

5.1. Բյուջեի եկամուտներ

Տնտեսական ակտիվության անկման խորացումը անդրադաձել է նաև պետական բյուջեի վրա՝ հանգեցնելով հարկային եկամուտների նվազմանը: Սակայն, միաժամանակ, զգալի աճել են պետական բյուջեի այլ եկամուտները՝ հանգեցնելով բյուջեի ընդհանուր եկամուտների անկման մեղմմանը: Այսպես, հունվար-նոյեմբեր ամիսներին պետական բյուջեի ընդհանուր եկամուտները նվազել են 1.1%-ով՝ հունվար-հոկտեմբերի 1.9% անկման դիմաց: Այդ նույն ժամանակահատվածում բյուջեի հարկային եկամուտները կրճատվել են 5.3%-ով, մինչդեռ այլ եկամուտներն աճել են 55.7%-ով, իսկ պաշտոնական դրամաշնորհներն աճել են ավելի քան երկու անգամ: Այլ եկամուտների աճը հիմնականում պայմանավորված է «Հայաստան» համահայկական հիմնադրամից փոխանցված գումարներով:

Գծապատկեր 11. Հարկային եկամուտների աճը 2020 թվականին, %



Հունվար-նոյեմբեր ամիսներին հարկային եկամուտների նվազումը հիմնականում պայմանավորված է եղել շահութահարկի (նվազումը՝ 16.1%) և մաքսատուրքի (նվազումը՝ 29.2%) անկումներով, որոնցից յուրաքանչյուրի նպաստումն ընդհանուր հարկերի նվազմանը կազմել է 1.9 տոկոսային կետ:


Հարկային եկամուտների նվազման պատճառներից նշանակալի են նաև ԱԱՀ-ի և պետական տուրքի գծով մուտքերի անկումները, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 1.1 և 0.8 տոկոսային կետ:

Աղյուսակ 1. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների, 2020թ.

	Հունվար-հոկտեմբեր		Հունվար-նոյեմբեր	
	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ
Ընդամենը հարկային եկամուտներ և պետական տուրք	-5.2	-5.2	-5.3	-5.3
ԱԱՀ	-2.9	-0.9	-3.2	-1.1
Շահութահարկ	-16.5	-2.1	-16.1	-1.9
Եկամտային հարկ	1.3	0.4	1.2	0.3
Ակցիզային հարկ	0.5	0.0	0.4	0.0
Շրջանառության հարկ	-8.6	-0.2	-8.4	-0.2
Արտոնագրային հարկ	-98.9	-0.3	-99.0	-0.3
Բնապահպանական հարկ և բնօգտագործման վճար	-2.3	-0.1	-7.4	-0.3
Մաքսատուրք	-29.4	-1.9	-29.2	-1.9
Սոցիալական վճար	28.9	0.4	31.1	0.4
Այլ հարկային եկամուտներ	13.4	0.2	16.4	0.2
Պետական տուրք	-23.9	-0.7	-26.6	-0.8

5.2. Բյուջեի ծախսեր

Գծապատկեր 12. Պետական բյուջեի ծախսերը և դրա բաղադրիչները, մլրդ դրամ




Պետական բյուջեի ծախսերի աճը նոյեմբեր ամսին շարունակել է լինել բարձր: Հունվար-նոյեմբեր ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ ընդհանուր պետական ծախսերն աճել են 19.7%-ով՝ կազմելով 1625.5 մլրդ դրամ: Ծախսերի կուտակային աճի տեմպը նախորդ ամսվա նկատմամբ նվազել է 0.1 տոկոսային կետով: Ընդհանուր ծախսերի դիսկրետ (12-ամսյա) աճը նոյեմբերին նախորդ տարվա նոյեմբերի նկատմամբ կազմել է 19.3%:

Ընթացիկ ծախսերի աճը հունվար-նոյեմբեր ամիսներին կազմել է 14.9%, իսկ կապիտալ ծախսերինը՝ 75.9%: Նշենք, որ կապիտալ ծախսերի աճը հիմնականում պայմանավորված է Արցախյան պատերազմի հետ կապված ծախսերի աճով:

5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը

Գծապատկեր 13. Պետական բյուջեի հավելուրդը (պակասուրդը (-), ժամանակահատվածի վերջի դրությամբ, մլրդ դրամ



Պետական բյուջեի պակասուրդը շարունակում է մեծանալ: 2020թ. հունվար-նոյեմբեր ամիսներին պակասուրդը կազմել է 242.7 մլրդ դրամ՝ նախորդ ամսվա համեմատ աճելով 36.8 մլրդ դրամով: Սակայն, 2021թ. պետական բյուջեի մասին օրենքի հիմքում դրված կանխատեսումների համաձայն՝ 2020թ. դեկտեմբերի վերջի դրությամբ պետք է արձանագրվի մոտ 430 մլրդ դրամ պակասուրդ, որը սակայն դժվար թե հաջողվի ապահովել ընդամենը մեկ ամսում: Իհարկե, ավելի փոքր պակասուրդը դրական երևույթ է, սակայն միայն այն դեպքում, երբ սպասվածից փոքր պակասուրդի պատճառը կրճատված ընթացիկ ծախսերն են կամ ավել հավաքագրված եկամուտները: Մինչդեռ այս դեպքում փոքր պակասուրդի պատճառը կապիտալ ծախսերի թերակատարումն է, ինչը միանշանակ բացասական է անդրադառնալու ինչպես 2020թ., այնպես էլ ապագա տարիների տնտեսական աճերի վրա:


5.4. Պետական պարտք

2020թ. նոյեմբերի վերջի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 7,947.4 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նոյեմբերի նկատմամբ աճելով 10.9%-ով: Ընդ որում, ՀՀ կառավարության պարտքը նոյեմբերի վերջի դրությամբ կազմել է 7,466.2 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճելով 12.2%-ով: Աճը տեղի է ունեցել հիմնականում ներքին պարտքի աճի հաշվին, որն աճել է 26.0%-ով՝ արտաքին պարտքի 8.1% աճի պայմաններում:

Նախորդ ամսվա նկատմամբ կառավարության պարտքը նոյեմբերի վերջի դրությամբ նվազել է 32.9 մլն ԱՄՆ դոլարով (ընդ որում, արտաքին պարտքը աճել է 30.7, իսկ ներքին պարտքը նվազել է 63.5 մլն ԱՄՆ դոլարով) կամ 0.4%-ով:

2020թ. ընթացքում (2019թ. դեկտեմբերի համեմատ) ՀՀ կառավարության պարտքն աճել է 634.3 մլն ԱՄՆ դոլարով, որից 228.4-ը՝ արտաքին, իսկ 405.9-ը՝ ներքին պարտքի հաշվին:


Գծապատկեր 14. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, %



6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

6.1. Գնաճ

Գծապատկեր 15. 12-ամսյա գնաճը, %




Նույնաբերին գրանցվել է 12-ամսյա գնաճի որոշակի արագացում, սակայն այն դեռևս մնում է Կենտրոնական բանկի թիրախից ցածր: Նույնաբերին 12-ամսյա գնաճը կազմել է 1.6%՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 0.3 տոկոսային կետով: Սեպտեմբերին ԿԲ-ի կողմից դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքի ևս մեկ անգամ իջեցումը դեռևս չի օգնել

գնաճի տեմպը հասցնել ԿԲ թիրախին: Սակայն, դեկտեմբերին Կենտրոնական բանկը կտրուկ՝ 1.0 տոկոսային կետով բարձրացրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ իրականացնելով զսպող քաղաքականություն: Վերջինս ուղղված է եղել նաև փոխարժեքի արժեզրկման ճնշումների մեղմմանը:


6.2. Ավանդներ և վարկեր

Գծապատկեր 16. Ավանդների 12-ամսյա աճը, %



2020թ. նոյեմբերին առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների ծավալների աճն ընթացիկ տարվա նախորդ ամիսների համեմատ եղել է բավական ցածր: Այս միտումը հատկապես նկատվել է հոկտեմբերից, երբ ավանդների աճի տեմպը դանդաղել է 4.2 տոկոսային կետով և կազմել 4.9%: Այդ երևույթը փոքր-ինչ մեղմվել է նոյեմբերին, սակայն ավանդների աճի տեմպը մնացել է ցածր՝ կազմելով 5.2%:


Գծապատկեր 17. Տնտեսության հատվածների նպաստումներն ավանդների աճին, տոկոսային կետ




Ավանդների աճի կառուցվածքում, նախորդ տարվա նույն ամսվա համեմատ ակնհայտ է ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդների նպաստման փոփոխությունը, որը 6.7 տոկոսային կետից դարձել է 0.7: Նվազել են նաև տնտեսության մյուս հատվածներից ներգրավված ավանդների ծավալների նպաստումները, որոնցից առավել ակնհայտ է տնային տնտեսությունների ավանդների նպաստման փոքրացումը, որը 6.0 տոկոսային կետից դարձել է բացասական՝ -0.1 տոկոսային կետ: Փոխարենը աճել է ձեռնարկություններից ներգրավվող ավանդների ծավալների նպաստումը՝ 0.5-ից դառնալով 2.3 տոկոսային կետ, ինչը խոսում է այն մասին, որ կազմակերպությունները հետաձգում են ներդրումային գործունեությունը և նախընտրում են ազատ դրամական միջոցները պարզապես պահել բանկերում՝ որպես ավանդ:

Վարկերի աճի տեմպը կտրուկ դանդաղել է նոյեմբերին: ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերը (արտարժույթով և ՀՀ դրամով) 2020թ. հունվար-նոյեմբեր ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 15.0 տոկոսով՝ նախորդ ամսվա համապատասխան ցուցանիշի համեմատ դանդաղելով 2.6 տոկոսային կետով: Վարկերի աճի բարձր տեմպը պայմանավորված էր նաև կառավարության տնտեսական օժանդակության ծրագրերով, որոնց ավարտը հանգեցրել է վարկերի աճի տեմպի դանդաղմանը:

Գծապատկեր 18. Վարկերի 12-ամսյա աճը, %



Գծապատկեր 19. Տնտեսության ճյուղերի նպաստումները վարկերի աճին, տոկոսային կետ



Վարկերի աճին հիմնականում նպաստել են արդյունաբերության ոլորտին տրամադրվող վարկերը, հիպոթեքային վարկերը և շինարարության ոլորտի վարկերը՝ համապատասխանաբար 4.4, 3.4 և 2.2 տոկոսային կետ նպաստումներով: Սպառողական վարկերի նպաստումը նախորդ տարվա համեմատ էականորեն նվազել է՝ 7.2 տոկոսային կետից հասնելով 1.6-ի, ինչը տնտեսությունում պահանջարկի նվազման ցուցիչ է: Սակայն, միաժամանակ պետք է արձանագրել, որ տեղի է ունենում վարկերի աճի կառուցվածքի բարելավում, քանի որ վարկերի հիմնական մասը ուղղվում են տնտեսությանը: Խնդիրը նրանում է, որ վարկերի կառուցվածքի բարելավումը կառավարության հակաճգնաժամային

միջոցառումների արդյունքն է, որոնք արդեն գրեթե ավարտվել են: Հետևաբար, սպասվում է վարկերի աճի տեմպի հետագա նվազում և կառուցվածքի վատթարացում:

7. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ


ՀՀ-ում համաճարակային իրավիճակը բավական վատթարացել է վերջին ամիսներին, ինչը կարելի է համարել համավարակի երկրորդ ալիք: Նոյեմբերի ընթացքում նոր գրանցված դեպքերի միջին օրական ցուցանիշը կազմել է 1510 դեպք, այն դեպքում երբ հոկտեմբերին այդ ցուցանիշը կազմում էր 1273, իսկ հունիս և հուլիս ամիսներին համապատասխանաբար 542 և 420:

Մահվան դեպքերը նոյեմբերին հասել են օրական միջին հաշվով 27-ի, այն դեպքում երբ հունիս-հուլիս ամիսներին այդ ցուցանիշը կազմում էր 10, իսկ հոկտեմբերին՝ 12:

Դեկտեմբերին պատկերը փոքր-ինչ բարելավվել է. հիվանդության օրական գրանցվող նոր դեպքերը կազմում են 855, իսկ մահվան դեպքերը՝ 23: Արդյունքում՝ դեկտեմբերի 26-ի դրությամբ ընդհանուր գրանցված դեպքերը անցել են 157 հազարը, իսկ մահվան դեպքերը՝ 2750-ը:

Մեկ միլիոն բնակչության հաշվով գրանցված դեպքերի թվով Հայաստանը զբաղեցնում է աշխարհում 11-րդ տեղը, իսկ մահվան դեպքերի թվով՝ 19-րդը: Նշենք, որ նախորդ ամիս մահվան դեպքերի թվով Հայաստանը զբաղեցնում էր 21-րդ տեղը: Հետևաբար այս առումով անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել իրավիճակը բարելավելու ուղղությամբ:

Գծապատկեր 20. Կորոնավիրուսի վարակման և մահացության դեպքերը



8. ԱՄՓՈՓՈՒՄ

1. **2020թ. տասնմեկ ամիսների ընթացքում տեղի ունեցած իրադարձությունների և դրանց համարժեք արձագանքի բացակայության հետևանքով առաջացել է ճգնաժամ՝ ոչ միայն տնտեսության, այլև երկրի գրեթե բոլոր ոլորտներում:** Մակրոտնտեսական ցուցանիշների վերոհիշյալ վերլուծությունը ցույց է տալիս, որ ընդհանուր առմամբ տնտեսությունը գլորվում է անկման ուղղությամբ՝ առանց դրական ազդակների: Գրեթե բոլոր ճյուղերում առկա է անկման խորացում, սակայն չկա տնտեսական քաղաքականության որևէ արձագանք այս ամենին: COVID-19-ի հետևանքների չեզոքացման համար մշակված հակաճգնաժամային ծրագրերը գրեթե սպառվել են՝ այդպես էլ մնալով մասամբ չիրականացված (մասնավոր ներդրումների խթանմանն ուղղված ծրագիրը, որի համար նախատեսվել էր մոտ 80 մլրդ դրամի չափով գումար, չի իրականացվել): Այս պայմաններում, ճգնաժամի ակտիվ փուլը դեռևս կշարունակվի՝ հանգեցնելով հսկայական տնտեսական կորուստների:

2. **Հունվար-նոյեմբեր ամիսների տնտեսական ակտիվության անկումը շարունակել է խորանալ՝ հասնելով -7.2%-ի՝ արտացոլելով հետպատերազմյան շրջանում առաջացած նոր ցնցումների ազդեցությունները:** Պատերազմը, կորոնավիրուսի երկրորդ ալիքը և քաղաքական անկայունությունները մեծացնում են անորոշությունները, ստեղծում են բացասական բարոյահոգեբանական մթնոլորտ, որի պայմաններում հնարավոր չէ իրականացնել արդյունավետ տնտեսական գործունեություն և զարգանալ: Արդյունքում, այս իրավիճակի շարունակությունը հանգեցնելու է տնտեսական ակտիվության հետագա անկմանը, իսկ 2021 թվականին՝ տնտեսական վերականգնման ծրագրերի ծախսողմանը:

3. **Կառավարության կողմից պետական ֆինանսների կառավարումը հիմնված է իներցիոն ծրագրերի իրականացման սկզբունքի վրա:** Չկա որևէ ադեկվատ արձագանք փոփոխվող իրավիճակին: Պարզապես անհրաժեշտության դեպքում մեծացվում են բյուջեի ծախսերը՝ ստեղծելով ռիսկեր պարտքի կայունության տեսանկյունից, սակայն չի իրականացվում ծրագրերի վերլուծություն, չեն բացահայտվում այն ծախսերը, որոնք իրենց նպատակահարմարությունը կորցրել են ներկա իրավիճակում և կարող են կրճատվել (իսկ այդպիսիք շատ են), ինչպես նաև չի ներկայացվում պարտքի կայունության ապահովման երաշխիքներ: Հարկ է նշել, որ տնտեսական ճգնաժամի ներկա իրավիճակում, կառավարության պարտքի ճգնաժամի առաջացումը, որը կուղեկցվի պարտքի վերաֆինանսավորման անհնարինությամբ, կարող է ունենալ աղետալի հետևանքներ ՀՀ տնտեսության համար: Սակայն դա թույլ չտալու համար անհրաժեշտ է իրականացնել կոնկրետ քայլեր, այլապես կառավարության ներկա

ինքնընդուն վարքագիծը տանում է հենց այդ նշված բացասական սցենարի նյութականացմանը:

4. **Ֆինանսական համակարգի կայունության վտանգներին կտրուկ արձագանքել է Կենտրոնական բանկը՝ բարձրացնելով քաղաքականության տոկոսադրույքը:** Դա կհանգեցնի արտարժույթի արտահոսքի կանխմանը, փոխարժեքի կայունացմանը և գների հետագա աճի դանդաղեցմանը: Սակայն, միաժամանակ, դա կհանգեցնի ամբողջական պահանջարկի զսպման՝ ավելի նվազեցնելով տնտեսական ակտիվությունը: Ներկա պայմաններում դա կարող է ունենալ երկարաժամկետ բացասական ազդեցություններ, հետևաբար անհրաժեշտ է հարկաբյուջետային քաղաքականության միջամտությունը՝ տնտեսությանը նոր խթաններ տալու գործում, ինչը սակայն 2021 թվականի բյուջեով նախատեսված չէ:

5. **Կորոնավիրուսի երկրորդ ալիքը ընթանում է զգալիորեն ավելի մեծ ծավալներով և ցավալի հետևանքներով:** Ինչպես վարակման հաստատված դեպքերը, այնպես էլ մահվան օրական միջին քանակը աճել է ավելի քան երեք անգամ՝ առաջին ալիքի համեմատ: Սակայն, ինչպես տնտեսական խնդիրների պարագայում, այս դեպքում նույնպես կառավարության կողմից չկա արձագանք, և չկան միջոցառումների ծրագրեր ուղղված իրավիճակի բարելավմանը: Հետևաբար, բնակչությունը իր ուժերով է փորձում հաղթահարել հիվանդությունը: Արդյունքում, Հայաստանը «բարելավում է» իր դիրքերը կորոնավիրուսային իրավիճակով աշխարհի ամենավատ երկրների ցանկում:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: